

քին մէջ իրեն շնորհած ինչքերը՝ Աստուծոյ փառքին ու իր հոգիին փրկութեանը համար՝ կտակով կարգադրէ ու բաժնէ : Այս նպատակով՝ իր կտակն իր վերջին կամքին համաձայն յիշեալ նօտարներու ներկայութեան յօրինեց ու կարգադրեց յանուն Հօր, եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, հետեւեալ կերպով ու եղանակով :

Նախ. որպէս բարի քրիստոնեայ եւ ճշմարիտ կաթողիկ յանձնեց եւ կը յանձնէ իր հոգին՝ երբ մարմնէն բաժնուի՝ մեր ամենողորմած Հօր՝ Յիսուսի Քրիստոսի, եւ անոր մօր՝ ամենափառաւորեալ Կոյս Մարիամու, սուրբ Միքայէլ հրեշտակապետին, սուրբ Պետրոսի եւ սուրբ Պօղոսի, եւ Արքայութեան բոլոր օրհնեալ՝ փառաւորեալ ու սուրբ դասուն : Ապա՝ յիշեալ կտակարարը կամեցաւ ու պատուիրեց Թաղուիլ Պարիսի Կեղեստինեանց կրօնաւորներու եկեղեցիին օրհնեալ հողին մէջ, այն պարագային՝ եթէ Ֆրանսայի մէջ վախճանի, եւ եթէ յիշեալ կրօնաւորներն հասին ընդունիլ զինքը՝ վարը յիշուած պատարագներով, որոնք պիտի կատարուին իրենց եկեղեցիին մէջ : Բայց եթէ նոյն կրօնաւորներն այս պայմաններով չուզեն ընդունիլ զինքը, այժմէն կը փափագի եւ կը պատուիրէ Թաղուիլ Պարիսի Կարտուսեան կրօնաւորներու եկեղեցիին մէջ, մի եւ նոյն պայմաններով, եթէ հասին. իսկ եթէ անոնք ալ չընդունին՝ կը պատուիրէ Թաղուիլ Պարիսի Աւգոստինեանց կամ Կորդելեանց եկեղեցիին մէջ, իր վարը յիշուած կտակակատարներուն կամքին համաձայն, ինչ կերպով որ անոնք յարմար դատեն : Ու նաեւ կտակարարս կը փափագի եւ կը պատուիրէ որ իր դագաղին վրայ պաշտօն կատարուած օրը՝ երբ զինք կառաջնորդեն դէպի գերեզման՝ հագած ըլլայ սպիտակ հաստ վերարկու (fossoye) մը . իր դէմքն ու ոտքերը բաց ըլլան, եւ տաճերկու սպիտակազգեստ հասարակ աղքատներ թող կրեն դագաղը. նոյն արարողութեան ժամանակ պէտք է որ չորս ջահ միայն գտնուի, զորս պէտք է կրեն վերիններուն նման սպիտակազգեստ չորս աղքատներ :

Դարձեալ, յիշեալ կտակարարը կը փափագի եւ կը պատուիրէ որ իր կտակակատարները, որոնց անունները պիտի յիշենք վարը, վճարեն իր բոլոր պարտքերը՝ անոնց իսկութիւնը բաւարար կերպով ստուգելէ վերջ, եւ հատուցանեն իր պատճառած վնասները :

Նոյնպէս, կը փափագի եւ կը պատուիրէ անմիջապէս վճարել Ստեփաննոսի՝ Հայոց Սիս քաղաքի Ասպետին՝ հարիւր Ֆրանկ, զոր կը պարտի անոր եւ կը խոստովանի պարտական ըլլալը : Եթէ յիշեալ Ստեփաննոս վախճանած ըլլայ, նոյն հարիւր Ֆրանկի գումարը վճարուի Ստեփաննոսի զաւակներուն, որոնք (հիմա) Կիպրոսի մէջ կը բնակին . իսկ (վերջն) ուր որ ըլլան : Եթէ անոնք ալ վախճանած ըլլան, յիշեալ կտակակատարներու կարգադրութիւնով, այդ հարիւր Ֆրանկի ոսկին՝ Աստուծոյ սիրուն եւ իբրեւ ողորմութիւն՝ բաշխուի աղքատներու, յիշեալ Ստեփաննոսի հոգիին համար :